ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մարտի 24-ից 28-ը

Ղրղզական Հանրապետություն (ք. Օշ, «Կիզիլ-Բել» անցումային կետ)

գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ստեփան Ստեփանյան ՀՀ ՊԵԿ ՄՀՎ մաքսային գործառնությունների կազմակերպման և հսկողության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզական Հանրապետություն, քաղաք Օշ, «Կիզիլ-Բել» անցումային կետ 24.03.2024-28.03.2024թթ.

3. Հրավիրող կողմը՝

Ղրղզական Հանրապետություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ղրղզական Հանրապետության կողմից 29.05.2014թ. ԵԱՏՄ պայմանագրին միանալու կապակցությամբ արդյունավետ մաքսային հսկողություն իրականացնելու համար անցումային բոլոր կետերի կահավորվածության և նյութատեխնիկական հագեցվածության անհրաժեշտ պայմանների ապահովման պարտավորության կատարման ուսումնասիրություն:

5. Քննարկված թեմաները՝

Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության «Կիզիլ-Բել» անցումային կետի կահավորվածության և նյութատեխնիկական հագեցվածության ուսումնասիրություն:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատանքային խմբի կողմից այցելություն է իրականացվել Ղրղզական Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության պետական սահմանին գտնվող, Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական

մաքսային ծառայության ավտոմոբիլային՝ «Կիզիլ-Բել» անցումային կետ: Ուսումնասիրության ընթացքում իրականացված այցելության արդյունքում պարզվել է, որ Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության կողմից իրականացվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները վերը նշված անցումային կետը մաքսային հսկողության համար անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական միջոցներով ապահովելու, անձնակազմի կողմից դրանք պրակտիկայում կիրառման համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ուսումնասիրության ավարտից հետո 28.03.2024թ. կազմվել է հաշվետվություն իրականացված մոնիտորինգի վերաբերյալ, որտեղ «Կիզիլ-Բել» անցումային կետի մասով նշվել են իրականացված գործողությունները: Հաշվետվությունը ստորագրվել է աշխատանքային խմբի բոլոր մասնակիցների կողմից (կցվում է):

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայությանը առաջարկվել է ամեն տարվա կտրվածքով իրականացնել անցումային կետերում գործող մաքսային հսկողության սարքավորումների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերը, դրանք աշխատանքային վիճակում պահելու հետ կապված տեխնիկական սպասարկումը, ապահովել անձնակազմի մասնագիտական պատշաճ մակարդակի հետագա աճը և որակավորման բարձրացումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

29.03.2024թ.